

Գորիս քաղաք

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 67 կմ,
Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 254 կմ
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1250-1520 մ,
Քաղաքը հիմնադրվել է՝ 1870թ.

Գտնվում է Գորիս (Վարարակ) գետի հովտում: Նախկին անվանումներն են՝ Գերյուսի, Գերուսի, Գորայք, Գորես, Գորիս, Հին Կյորես, Կյուրիս, Կորուս, Կորու, Կուրիս, Ջանգիգուր, Ջանկյագուր, Կյուրյուս: Գորիս անվան տարբեր բացատրություններ կան: Ենթադրվում է, որ տեղանվան հիմքը կազմում են հնդեվրոպական նախալեզվի գուռո-«ժայռ» և էս-«լինել» բառերը, այսինքն Գորիս-Կյորես նշանակում է ժայռոտ տեղ: Քաղաքի տեղում բնակավայր եղել է հնագույն ժամանակներից, թերևս մարդն այստեղ բնակություն է հաստատել քարեդարյան շրջանում: Գորիս անվան հնագույն հիշատակումը գալիս է ուրարտական ժամանակաշրջանից: Ռուսա առաջին թագավորը մ.թ.ա. 8-րդ դարում թողել է սեպագիր, ուր իր նվաճած 23 երկրների մեջ նշում է Գորիսցա երկիրը: Գիտնականները գտնում են, որ դա Գորիսն է: Գորիսում գտնվել է նաև Արտաշես 2-րդ թագավորի (189-160 մ.թ.ա.) արամեերեն արձանագրության սահմանաքար:

Բնակավայրը գոյություն է ունեցել նաև միջին դարերում և գտնվել է ներկայիս Գորիսի արևելյան մասում՝ համանուն գետի ձախ ափին, կոչվում էր հին Գորիս և համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի կողմից հիշատակած (13-րդ դար) Կորու և Կորայք գյուղերից մեկին: Քաղաքի անվան ներկայիս գրելաձևը առաջին անգամ հանդիպել է 1624թ. Բարսեղ Երեցի կողմից գրված մի ձեռագրում:

17-18-րդ դարերում Գորիսում հաստատվել և իշխում էին Մելիք-Հուսեինյանները:

Գորիսը 19-րդ դարի սկզբին՝ 1813թ. հոկտեմբերի 13-ի Գյուլիստանի պայմանագրով, անցնում է ցարական Ռուսաստանի տիրապետության տակ: Գորիսի զարգացումը սկսում է 19-րդ դարի 70-ական թվականներից, երբ ցարական վարչական բաժանմամբ այն դարձավ Ջանգեգուր գավառի կենտրոնը: 1876թ. Հին Գորիսի մոտ Ստարացկի գավառապետի նախաձեռնությամբ, Մանուչար-Բեկ Մելիք Հուսեինյանի խորհրդով և գերմանացի ճարտարապետի կազմած նախագծով հիմնադրվում է Գորիս քաղաքը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տնտեսական և մշակութային առումով քաղաքը բավական առաջադիմել էր: 1930թ. սեպտեմբերի 9-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ Գորիսը դարձավ համանուն շրջանի վարչական կենտրոնը: Քաղաքը հանդիսացավ արցախյան շարժման հենասյուներից մեկը: Քաղաքում անդրանիկ երթը տեղի ունեցավ փետրվարի 22-ին: Նշանակալից իրադարձություն էր նաև 1989թ. Մյունխենից հոգևոր թեմի վերաբացումը, որի առաջնորդարանը հաստատվեց Գորիսում: Գորիսում կա 1941-45թթ. Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին կանգնեցված բազալտակուռ աղբյուր-հուշարձանը: Այստեղ են ծնվել Ակսել Բակունցը, Սերո Խանգաղյանը, Գուսան Աշոտը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Սևադա Բակունցը:

Քաղաքը 19-րդ դարի 70-ական թթ. ուներ մոտ 1000, 1897թ.՝ 2400, իսկ 1976թ.-ին՝ 17400 բնակիչ: 1992թ.-ին համագործակցության համաձայնագիր է կնքվել Գորիսի և Ֆրանսիայի Վիենի քաղաքների միջև, որի շրջանակներում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել տուրիզմի, մշակույթի, կրթության, սպորտի, բնապահպանության, առողջապահության, քաղաքի ենթակառուցվածքների զարգացման և այլ ոլորտներում: 2008թ. համագործակցության համաձայնագիր է կնքվել Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի Նեսվիժ շրջանի հետ: Գորիսում գործում են արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանցից են՝ «Գամմա»,

«Զանգեզուր», «Գորիսի միկրոշարժիչ» ԲԲԸ-ները, գործում են սննդարդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի մի շարք ձեռնարկություններ, կան քարավազակա արտադրամասեր: Քաղաքում հատկապես զարգացած է էներգետիկայի արտադրությունը, հանձինս «Որոտան ՀԷԿ-երի համակարգ» ՓԲԸ-ի:

Գորիսը Սյունիքի մարզի խոշոր կրթական ու մշակութային կենտրոններից է: Գորիսում գործում է երկու ավագ, չորս հանրակրթական և մեկ հատուկ դպրոց:

Գործող բարձրագույն ուսումնական հաստատություններն են Գորիսի պետական համալսարանը, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղը, «Սյունիք»

ինստիտուտը և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ՝

Մանկավարժական քոլեջը ու Գորիսի գյուղատնտեսական պետական քոլեջը:

Գործում են 7 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, 5 արտադպրոցական ուսումնական հաստատություններ՝ Ա. Սաթյանի և Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցներ, Գ.Պարոնյանի անվան Արվեստի դպրոց, Ա.Օրդյանի անվան շախմատի դպրոց, մանկապատանեկան մարզադպրոց:

Մշակութային կառույցներն են՝ Գուսան Աշոտի անվան մշակութային կենտրոնը՝ իր ստորաբաժանումներով, Երկրագիտական թանգարանը, Քաղաքային պատկերասրահը, գրադարանների կենտրոնացված համակարգը, ֆիլմադարանը, Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Ա.Բակունցի տուն-թանգարանը, Երևանի գեղագիտական դաստիարակության կենտրոնի Գորիսի մասնաճյուղը:

Գորիսի առողջապահական հաստատություններն են՝ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ,

Սրտաբանական կենտրոն, «Գորիսի Ս.Ամիրյանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ, Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան, «Դիագնոստիկա» ԲԲԸ-ի մասնաճյուղ՝ վերանվանված «Սյունիք» բժշկական կենտրոն:

Գորիս քաղաքում գործում են 20-ից ավելի հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5039 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4035 հա, որից՝

- վարելահող՝ 997 հա, խոտհարք՝ 271 հա, արոտ՝ 2119 հա, այլ հողատեսք՝ 648 հա

- բնակավայրերի հողեր՝ 587 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 49 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 5 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 58 հա,

- հատուկ նշանակության հողեր՝ 24 հա,

- անտառային հողեր՝ 255 հա, որից անտառածածկ՝ 255 հա

- ջրային հողեր՝ 28 հա